

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Չբաղվածություն

1.4.1.1. Չբաղվածության ցուցանիշների գնահատումն ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների

Չեկույցի այս հատվածում ներկայացված են աշխատանքի շուկայի 2017-2018թթ. I եռամսյակի հիմնական ցուցանիշները՝ գնահատված աշխատուժի հետազոտության¹ արդյունքներով:

Հետազոտության հիմքում դրված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և հաշվարկման մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են ԱՄԿ (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) և (կամ)² Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներին և դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Ստորև ներկայացվում են հետազոտության վերաբերյալ մեթոդաբանական որոշ պարզաբանումներ:

Հետազոտության ընտրանքային հիմնական միավորները մասնավոր տնային տնտեսություններն (SS) են:

Հետազոտվող միավորը 15-75 (ներառյալ) տարեկան անձինք են, ովքեր.

ա) սովորաբար բնակվում են տվյալ SS-ում.

բ) ժամանակավորապես (մինչև 3 ամիս) չեն բնակվում տվյալ SS-ում՝ գտնվելով ՀՀ մեկ այլ բնակավայրում կամ երկրից դուրս.

գ) գտնվում են պարտադիր ժամկետային զինծառայության մեջ:

Դիտարկվող ժամանակաշրջանը տարվա բոլոր ամիսներն են:

Հետազոտվող ժամանակահատվածը հետազոտությանը (հարցմանը) նախորդող վերջին օրացուցային շաբաթն է՝ երկուշաբթիից կիրակի օրը (ներառյալ):

Ընտրանքային համակցության ամսական չափը կազմում է 649 SS, եռամսյակայինը՝ 1 947 SS, իսկ տարեկանը՝ 7 788 SS՝ ընդգրկելով ք. Երևանը և հանրապետության բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերը:

Հետազոտության մեթոդաբանության համաձայն յուրաքանչյուր հարցվող ըստ աշխատաշուկայում մասնակցության աստիճանի դասակարգվում է միմյանց բացառող հետևյալ երեք խմբերի՝ **զբաղված կամ գործազուրկ կամ տնտեսապես ոչ ակտիվ (այսուհետ՝ աշխատուժից դուրս բնակչություն)**:

¹ Հետազոտության 2016թ. արդյունքները, ինչպես նաև մեթոդաբանությունը և ցուցանիշների սահմանումները մանրամասն ներկայացված են «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2017» վիճակագրական ժողովածուում՝ գետեղված ՀՀ ՎԿ կայքի <http://armstat.am/am/?nid=82&id=1994> հասցեում, իսկ հետազոտության անվանագրքով տվյալների բազան հասանելի է ՀՀ ՎԿ կայքի <http://armstat.am/am/?nid=212> հասցեում:

² ԱՄԿ-ի և Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներում առանձին դեպքերում առկա են որոշ տարբերություններ: Մասնավորապես, պարտադիր ժամկետային զինծառայողներն ըստ ԱՄԿ մեթոդաբանության դասվում են զբաղվածների (տե՛ս, ILO, ISCO- 08), իսկ ըստ Եվրոստատի (տե՛ս European Commission, The European Union labour force survey, Methods and definitions-2001)՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության խմբին: Տվյալ դեպքում ՀՀ ՎԿ-ն հիմք է ընդունել վերջինս, որը կիրառվում է Եվրամիության անդամ երկրներում:

**2018 թվականի հունվարից սկսած աշխատանքի շուկայի
վիճակագրության մեթոդաբանության փոփոխության վերաբերյալ**

ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը՝ տնային տնտեսություններում (S/S) իրականացվող աշխատուժի հետազոտության շրջանակում: Մասնավորապես, **2018թ. հունվարից մեկնարկել է Աշխատանքի վիճակագրության միջազգային 19-րդ համաժողովում (19-րդ ԱՎՄՀ) ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թեթոզագործման վիճակագրության մասին» 2013թ. հոկտեմբերին ընդունված բանաձևի¹ առանցքային դրույթների ներդրման և տեղայնացման գործընթացը:**

19-րդ ԱՎՄՀ ներդրման շրջանակում.

▪ **Ընդլայնվել է «աշխատանքային գործունեություն»** հասկացության շրջանակը, որի նպատակն է ճանաչել և չափելի դարձնել աշխատանքի բոլոր ձևերը՝ հստակ տարբերակված ըստ **վճարվող և չվճարվող** աշխատանքների: Ըստ նոր սահմանման, **աշխատանքային գործունեությունը ցանկացած տարիքի և սեռի անձանց կողմից իրականացվող ցանկացած գործունեությունն է, որի նպատակն է արտադրել ապրանքներ կամ տրամադրել ծառայություններ՝ սեփական կամ այլոց սպառման համար՝ անկախ աշխատանքի ֆորմալ, ոչ ֆորմալ բնույթից կամ գործունեության օրինականությունից:** Ընդ որում, «զբաղվածությունը» համարվում է աշխատանքի հինգ ձևերից միակը, որն իրականացվում է այլոց համար՝ վարձատրության կամ եկամտի դիմաց:

Աշխատանքի հինգ ձևերն են.

1. **Զբաղվածություն**՝ այլոց համար կատարվող եկամուտ հետապնդող աշխատանք.
2. **Սեփական սպառման համար** ապրանքների արտադրություն և ծառայությունների տրամադրում.

2ա. Սեփական սպառման համար ապրանքների արտադրություն (օրինակ՝ հողագործական, անասնապահական ապրանքների արտադրություն՝ անմիջապես սպառման կամ պահեստավորման համար, սեփական տան կառուցում, կապիտալ նորոգում, կահույքի պատրաստում, հագուստի կարում, գործում, վառելիքայտի հավաքում, պահեստավորում և այլն).

2ա1. Սննդամթերքի բնաիրային արտադրություն (օրինակ՝ հողագործության, բուսաբուծության, անասնապահական, անասնաբուծական ապրանքների արտադրություն, ձկնորսություն, հավաքչություն և այլն).

2բ. Սեփական սպառման համար ծառայությունների տրամադրում (օրինակ՝ չվճարվող տնային գործեր, ընտանիքի ծեր / հիվանդ / մանկահասակ անդամի խնամք և այլն).

3. Զվարճատրվող աշխատանքային պրակտիկա՝ այլոց համար կատարվող չվճարվող աշխատանք՝ աշխատատանքային փորձ կամ հմտություն ձեռք բերելու նպատակով.

4. Կամավոր աշխատանք՝ այլոց համար կատարվող ոչ հարկադիր աշխատանք.

5. Այլ աշխատանք՝ այլոց համար կատարվող (օրինակ՝ աշխատանք կալանավայրում), որի գնահատման մեթոդաբանությունը դեռևս մշակման գործընթացում է:

¹ Բնօրինակը՝ Resolution concerning statistics of work, employment and labour underutilization, Adopted by the Nineteenth International Conference of Labour Statisticians (October 2013) http://www.ilo.org/global/statistics-and-databases/meetings-and-events/international-conference-of-labour-statisticians/19/WCMS_230304/lang--en/index.htm

Բնօրինակի պաշտոնական թարգմանությունը՝ [Резолюция I 19 Международной конференции статистиков труда \(на русском языке\), ссылка на сайт Международной организации труда \(МОТ\), http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/normativeinstrument/wcms_235603.pdf](http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/normativeinstrument/wcms_235603.pdf)

Աշխատանքային գործունեության ձևերի չափման սույն մեթոդաբանության առանձնահատկություններից է նաև այն, որ մարդը ՄԻԱԺԱՄԱՆԱԿ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում ցանկացած կոմբինացիայով (տե՛ս 82-83 էջերի աղյուսակները):

- **Ընդլայնվել է** «աշխատուժի թերօգտագործում» (labour underutilization) հասկացության շրջանակը՝ բնութագրելով ոչ միայն գործազուրկ բնակչության չբավարարված առաջարկը, այլ նաև աշխատունակ բնակչության¹ մյուս խմբերի՝ զբաղվածների և աշխատուժից դուրս բնակչության չբավարարված առաջարկը (տե՛ս գծապատկեր 1-ը, էջ 80):

Աշխատուժի թերօգտագործումը (ԱԹ) բնութագրող ցուցանիշներն են.

1. ԱԹ1. Գործազրկության մակարդակ.
2. ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության² (time-related underemployment) և գործազրկության զուգորդված մակարդակ.
3. ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ.
4. ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ազդեցացված ցուցանիշ:

- Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում **ընդլայնվել է** աշխատանքի շուկայի մշտադիտարկման **առանցքային** վիճակագրական ցուցանիշների **անհրաժեշտ նվազագույն շրջանակը**:

- **Վերանայվել** կամ փոփոխության են ենթարկվել մի շարք ցուցանիշների սահմանումները:

Զբաղվածության նոր ցուցանիշի սահմանն համաձայն. «Զբաղված համարվում են 15-75 տարեկան անձինք, ովքեր հետազոտվող շաբաթում եկամուտ / աշխատավարձ ստանալու նպատակով գոնե մեկ ժամ զբաղվել են ապրանքների արտադրությամբ կամ տրամադրել են ծառայություններ՝ **բացառապես այդոց սպառման համար**»: *Այսինքն, նախկին սահմանման համեմատ զբաղվածների թվաքանակից բացառվել են նրանք, ովքեր հետազոտվող շաբաթում իրենց տնտեսությունում զբաղվել են **ապրանքների արտադրությամբ սեփական վերջնական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ***:

- **Վերանայվել** են որոշ ցուցանիշների անվանումները:

1. «Տնտեսապես ակտիվ բնակչություն» եզրույթը վերանվանվել է «աշխատուժ» (բնօրինակը՝ labour force): Համապատասխանաբար, «Տնտեսական ակտիվության մակարդակ» եզրույթը վերանվանվել է «Աշխատուժի մասնակցության մակարդակ» (labour force participation rate):
2. «Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն» եզրույթը վերանվանվել է «աշխատուժից դուրս բնակչություն», որի բնօրինակ համարժեքն է՝ Population out of labour force:

Աշխատանքի շուկայի վիճակագրական չափման միջազգային ստանդարտների վերոնշյալ փոփոխության հետևանքով, օբյեկտիվորեն առաջացել է աշխատանքի շուկայի (ԱՇ) ցուցանիշների ժամանակագրական շարքերի որոշակի խզում³, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխան ցուցանիշները նախորդ տարիների հետ համեմատելիս:

¹ Սույն հետազոտության մեթոդաբանության շրջանակում աշխատունակ տարիք սահմանված է 15-75տ. ներառյալ :

² Զբաղված անձինք են, ովքեր աշխատել են նորմալ աշխատաժամանակից պակաս, որովհետև չեն կարողացել գտնել լրիվ աշխատանքային օր տևողությամբ աշխատանք կամ աշխատաժամանակը կրճատվել է գործատուի նախաձեռնությամբ, սակայն ցանկացել և պատրաստ են եղել փոխել իրենց աշխատանքային վիճակը:

³ Առանձնապես նշանակալի է զբաղվածության ցուցանիշի փոփոխությունը՝ ի հաշիվ բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք արտադրողների զբաղվածության թվաքանակից բացառման և գործազուրկների և / կամ աշխատուժից դուրս բնակչության թվաքանակներում վերաբաշխման: Նշյալ փոփոխության արդյունքում՝ փոփոխության են ենթարկվել նաև բնակչության տնտեսական ակտիվության մակարդակները բնութագրող ցուցանիշները:

Այստեղ և հետագա հրապարակումներում 19-րդ ԱՎՄՀ բանաձևի դրույթների համաձայն գնահատված **ԱՇ** 2018թ. ցուցանիշները կհրապարակվեն 2017թ.-ի համապատասխան ցուցանիշների հետ համեմատությամբ՝ հաշվարկված ՆՈՐ (19-րդ ԱՎՄՀ) և ՆԱԽԿԻՆ (13-րդ ԱՎՄՀ) մեթոդաբանություններով:

Նոր ստանդարտների ներդրման գործընթացի աշխատատարությամբ պայմանավորված, զեկույցի սույն հրապարակման մեջ կներկայացվեն աշխատանքի շուկայի մշտադիտարկման առանցքային վիճակագրական ցուցանիշները՝ նվազագույն անհրաժեշտ **շրջանակով**, սակայն զուգահեռաբար.

- 2017թ. առաջին եռամսյակի ցուցանիշները **հնարավորինս** վերահաշվարկված **նոր** մեթոդաբանությամբ՝ համեմատելու համար 2018թ. առաջին եռամսյակի տվյալների հետ.
- 2018թ. առաջին եռամսյակի ցուցանիշները վերահաշվարկված **նախկին** մեթոդաբանությամբ՝ համեմատելու համար 2017թ. առաջին եռամսյակի տվյալների հետ:

Նոր ստանդարտներով առաջարկվող մեթոդաբանական առանցքային փոփոխությունները և լրացումներն առավել մանրամասն կներկայացվեն «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2019» վիճակագրական ժողովածուում և Աշխատուժի հետազոտության «Որակի հոչակագրի» և Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտի մեթատվյալներում: Նոր մեթոդաբանության վերաբերյալ պարզաբանումներ՝ շնորհանդեսի ձևաչափով, զետեղված են ՀՀ ՎԿ կայքի հետևյալ հասցեում՝ <http://www.armstat.am/am/?nid=369>:

2018թ. ցուցանիշները դեռևս **նախնական են**:


Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները I եռամսյակ
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	Հաշվարկն ըստ ՆԱԽԿԻՆ մեթոդաբանության		
	2017թ.	2018թ.	Փոփոխությունը
	1000 մարդ		%
Աշխատանքային ռեսուրսներ	2 042.1	2 055.4	100.7
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	839.3	807.1	96.2
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1 202.9	1 248.2	103.8
Զբաղվածներ	974.5	1 027.9	105.5
<i>որից՝</i> զբաղված սեփական սպառման համար ապրանքների արտադրությամբ	98.7	112.2	113.7
Գործազուրկներ	228.4	220.2	96.4
	Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության		
Աշխատանքային ռեսուրսներ	2 042.1	2 055.4	100.7
Աշխատուժից դուրս բնակչություն	922.7	902.0	97.8
Աշխատուժ (աշխատուժի առաջարկ)	1 119.4	1153.3	103.0
Զբաղվածներ	875.9	915.7	104.5
Մանրամթերքի բնաիրային արտադրության գործունեություն իրականացնողներ	98.7	112.2	113.7
Գործազուրկներ	243.6	237.6	97.5

Բնակչության տնտեսական ակտիվությունը, I եռամսյակ
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	Հաշվարկն ըստ ՆԱԽԿԻՆ մեթոդաբանության		
	2017թ.	2018թ.	Փոփոխությունը
	%		+/-
Տնտեսական ակտիվության մակարդակը ¹	58.9	60.7	1.8
Զբաղվածության մակարդակ ¹	47.7	50.0	2.3
Գործազրկության մակարդակ ²	19.0	17.6	-1.4
	Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության		
Աշխատուժի մասնակցության մակարդակ ¹	54.8	56.1	1.3
Զբաղվածության մակարդակ ¹	42.9	44.6	1.7
Սնդամթերքի բնախրային արտադրության գործունեություն իրականացնողներ ¹	4.8	5.5	0.7
Գործազրկության մակարդակ ²	21.8	20.6	-1.2

Գծապատկեր 1. Աշխատուժի թերօգտագործման չափման շրջանակը
(հիմքը՝ 19-րդ ԱՎՍՀ բանաձև)




¹ Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:
² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության / աշխատուժի թվաքանակի նկատմամբ:

Աշխատուժի թերօգտագործում, 2017-2018թթ. I եռամսյակ
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	Հաշվարկն ըստ ՆԱԽԿԻՆ մեթոդաբանության		Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության	
	2017թ.	2018թ.	2017թ.	2018թ.
ԱԹ1. Գործազրկության մակարդակ ¹ , %	19.0	17.6	21.8	20.6
ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերգաղվածության և գործազրկության զուգորդված մակարդակ ¹ , %	24.7	22.2	25.8	23.5
ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ ² , %	32.7	24.1	39.5	33.9
ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ազդեցված ցուցանիշ ² , %	37.4	27.9	42.6	36.3
Թերգաղվածության մակարդակ ³ , %	7.0	5.5	5.1	3.7
Երկարատև գործազրկության մակարդակ ⁴ , %	55.1	57.3	51.6	53.1

Աշխատուժի թերօգտագործման մակարդակներ, 2017-2018թթ. I եռամսյակ
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

Հաշվարկն ըստ ՆՈՐ մեթոդաբանության



¹ Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության / աշխատուժի թվաքանակի նկատմամբ:

² Հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության / աշխատուժի և պոտենցիալ աշխատուժի թվաքանակների հանրագումարի նկատմամբ:

³ Հաշվարկված է զբաղվածների թվաքանակի նկատմամբ:


⁴ Հաշվարկված է գործազուրկների թվաքանակի նկատմամբ:

Աշխատանքային գործունեության մեջ ներգրավված բնակչությունն¹ ըստ աշխատանքի ձևերի,
 2018թ. I եռամսյակ

(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	Ընդամենը ¹ , 1 000 մարդ	Բնակչության մասնակցության մակարդակը, ^{1,2} %
Զբաղվածություն	915.7	44.6
Չվարձատրվող աշխատանքային պրակտիկա	9.1	0.4
Սեփական սպառման համար ապրանքների արտադրության աշխատանքային գործունեություն	423.2	20.6
Սննդամթերքի բնափրային արտադրության աշխատանքային գործունեություն	346.3	16.8
Սեփական սպառման համար ծառայությունների տրամադրման աշխատանքային գործունեություն	1 524.2	74.2
Կամավոր աշխատանք	219.6	10.7

Աշխատանքային գործունեության ձևերում բնակչության
 մասնակցության մակարդակը, %



¹ Նույն մարդը միաժամանակ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում

² Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:

Աշխատանքային ռեսուրսների բաշխումն ըստ չվճարվող աշխատանքային գործունեության ձևերի, 2018թ. I եռամսյակ
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

	Ընդամենը ¹ , %	Մեփական սպառման համար ապրանքների արտադրություն	Կամավոր աշխատանք	Չվարձատրվող աշխատանքային պրակտիկա
Աշխատանքային ռեսուրսներ	100	100	100	100
Զբաղված	59.3	49.0	20.7	0.5
Գործազուրկ	7.2	16.0	52.8	6.5
Աշխատուժից դուրս բնակչություն	33.5	35.0	26.5	1.0

	Ընդամենը ¹ , %	Մեփական սպառման համար ապրանքների արտադրություն	Կամավոր աշխատանք	Չվարձատրվող աշխատանքային պրակտիկա
Զբաղված	100	67.7	31.8	0.5
Գործազուրկ	100	41.2	52.3	6.5
Աշխատուժից դուրս բնակչություն	100	62.1	36.8	1.0

¹ Անկախ աշխատաշուկայում մասնակցության աստիճանի, մարդը կարող է ներգրավված լինել չվճարվող աշխատանքային գործունեության ձև(եր)ում:

1.4.1.2. Գործազրկության ցուցանիշներն ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տվյալների

Աշխատուժի առաջարկը, 2018թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ		նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	85 295	89.0	69 784	86.6
Փետրվար	84 539	87.9	69 167	85.4
Մարտ	83 511	86.9	68 386	84.7
Ապրիլ	82 590	86.6	68 880	86.4
Մայիս	82 412	88.3	68 553	87.7
Հունիս	82 759	90.4	68 364	89.2

Աշխատուժի առաջարկն ըստ սեռի, 2018թ.


ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ				նրանցից՝ գործազուրկներ			
	կին		տղամարդ		կին		տղամարդ	
	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	55 965	90.0	29 330	87.2	46 468	87.6	23 316	84.7
Փետրվար	55 458	89.1	29 081	85.8	46 026	86.5	23 141	83.4
Մարտ	54 765	88.1	28 746	84.6	45 571	86.0	22 815	82.3
Ապրիլ	54 058	87.7	28 582	84.5	45 769	87.5	23 111	84.3
Մայիս	53 939	89.0	28 473	86.8	45 559	88.5	22 994	86.1
Հունիս	54 153	91.0	28 606	89.3	45 335	89.6	23 029	68.5

Աշխատուժի առաջարկն ըստ տարիքային խմբերի և սեռի, 2018թ. հունիս

Կին

Տղամարդ



Առաջին անգամ աշխատանք փնտրողներն ըստ կրթության, 2018թ. հունիս

ամսվա վերջի դրությամբ


	Ընդամենը		Կին		Տղամարդ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	31 133	100	19 754	100	11 379	100
հետրուհական, բարձրագույն	3 411	11.0	2 367	12.0	1 044	9.2
թերի բարձրագույն, միջին մասնագիտական	4 697	15.1	3 512	17.8	1 185	10.4
նախամասնագիտական (արհեստագործական)	1 334	4.3	768	3.9	566	5.0
միջնակարգ ընդհանուր	18 905	60.7	11 683	59.1	7 222	63.5
հատուկ ընդհանուր	2	0.0	2	0.0	0	0
հիմնական ընդհանուր	2 539	8.2	1 321	6.7	1 218	10.7
տարրական ընդհանուր	245	0.8	101	0.5	144	1.3
որից՝ երիտասարդներ (16-29 տարեկաններ)	12 182	39.1	7 946	40.2	4 236	37.2

Աշխատանք փնտրողների կազմն ըստ սեռի, 2018թ. հունիս

ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը		Կին		Տղամարդ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	82 759	100	54 153	100	28 606	100
<i>նրանցից՝</i>						
զբաղվածներ	14 096	17.0	8 643	16.0	5 453	19.1
տարիքային կենսաթոշակի տարիքը լրացած անձինք	297	0.4	174	0.3	123	0.43
գործազուրկներ	68 364	82.6	45 335	83.7	23 029	80.5
<i>նրանցից՝</i> հաշմանդամություն ունեցող անձինք	2 655	3.2	1 134	2.1	1 521	5.3

Աշխատանք փնտրողներն ըստ սեռի, 2018թ. հունիս




Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2018թ. հունիս

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ		նրանցից՝ գործազուրկներ		
	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	82 759	90.4	68 364	89.2	100
ք. Երևան	12 776	84.5	9 873	84.5	14.4
Արագածոտն	4 721	93.6	3 555	92.6	5.2
Արարատ	7 201	94.3	5 868	87.8	8.6
Արմավիր	7 232	95.2	5 905	95.2	8.6
Գեղարքունիք	5 957	88.8	5 063	87.0	7.4
Լոռի	9 230	90.6	8 794	90.1	12.9
Կոտայք	9 994	92.5	7 882	87.1	11.5
Շիրակ	15 761	94.1	13 005	95.1	19.0
Սյունիք	3 455	90.5	3 095	87.5	4.5
Վայոց ձոր	1 244	63.1	936	65.8	1.4
Տավուշ	5 188	88.2	4 388	88.8	6.4

Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունն
ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2018թ. հունիս

%-ով նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



16-29 տարեկան աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2018թ. հունիս

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրող երիտասարդներ		նրանցից՝ գործազուրկներ		
	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենը, մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %	ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	18 915	88.2	14 999	81.5	100
ք. Երևան	2 175	77.3	1 406	66.6	9.4
Արագածոտն	1 102	95.7	707	88.5	4.7
Արարատ	1 936	100.6	1 554	94.0	10.4
Արմավիր	1 565	90.3	1 191	83.2	7.9
Գեղարքունիք	1 362	87.4	1 157	85.1	7.7
Լոռի	2 239	87.9	2 055	86.4	13.7
Կոտայք	2 082	91.8	1 733	89.7	11.6
Շիրակ	4 007	92.0	3 088	74.4	20.6
Սյունիք	727	88.0	583	78.8	3.9
Վայոց ձոր	329	63.8	255	70.1	1.7
Տավուշ	1 391	79.6	1 270	85.9	8.5

Աշխատուժի առաջարկն ըստ տարիքային խմբերի, 2018թ. հունիս



Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ տարիքային խմբերի, 2018թ. հունիս

ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը		Կին		Տղամարդ		Քաղաք		Գյուղ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	68 364	100	45 335	100	23 029	100	43 953	100	24 411	100
16 - 19	612	0.9	417	0.9	195	0.8	463	1.1	149	0.6
20 - 24	5 359	7.8	3 460	7.6	1 899	8.2	3 615	8.2	1 744	7.1
25 - 29	9 028	13.2	6 217	13.7	2 811	12.2	6 090	13.9	2 938	12.0
30 - 34	9 458	13.8	6 524	14.4	2 934	12.7	6 033	13.7	3 425	14.0
35 - 44	18 402	26.9	12 165	26.8	6 237	27.1	11 647	26.5	6 755	27.7
45 - 54	13 746	20.1	8 636	19.0	5 110	22.2	8 544	19.4	5 202	21.3
55 >	11 759	17.2	7 916	17.5	3 843	16.7	7 561	17.2	4 198	17.2

Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ կրթության, 2018թ. հունիս


ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը		Կին		Տղամարդ		Քաղաք		Գյուղ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	68 364	100	45 335	100	23 029	100	43 953	100	24 411	100
հետբուհական, բարձրագույն	8 648	12.6	6 530	14.4	2 118	9	7 260	17	1 388	6
թերի բարձրագույն, միջին մասնագիտական	12 021	17.6	9 775	21.6	2 246	10	9 609	22	2 412	10
նախամասնագիտական (արհեստագործական)	3 745	5.5	2 228	4.9	1 517	7	2 977	7	768	3
միջնակարգ ընդհանուր	37 624	55.0	23 624	52.1	14 000	61	20 743	47	16 881	69
հատուկ ընդհանուր	5 555	8.1	2 876	6.3	2 679	12	3 098	7	2 457	10
հիմնական ընդհանուր	2	0.0	2	0.0	0	0	2	0	0	0
տարրական ընդհանուր	769	1.1	300	0.7	469	2	264	1	505	2

Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակն ըստ աշխատանք փնտրելու տևողության և սեռի, 2018թ. հունիս

ամսվա վերջի դրությամբ

	Գործազուրկներ, մարդ	այդ թվում՝ ըստ աշխատանք փնտրելու տևողության					Անավարտ գործազրկության միջին տևողությունը, ամիս
		մինչև 3 ամիս	4 - 6 ամիս	7 - 11 ամիս	1 - 3 տարի	3> տարի	
Ընդամենը	68 364	4 182	4 230	7 089	22 998	29 865	33.0
Կին	45 335	2 646	2 736	4 680	14 458	20 815	33.8
Տղամարդ	23 029	1 536	1 494	2 409	8 540	9 050	31.5



Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը

	Ընդամենը, մարդ		Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %	
	2017թ.	2018թ.	2017թ.	2018թ.
Հունվար	80 534	70 010	104.2	86.9
Փետրվար	80 763	69 476	102.9	86.0
Մարտ	80 830	68 777	100.6	85.1
Ապրիլ	80 213	68 633	99.0	85.6
Մայիս	78 948	68 717	98.7	87.0
Հունիս	77 402	68 459	98.3	88.4

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը՝ աճողական

	Ընդամենը, մարդ		Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %	
	2017թ.	2018թ.	2017թ.	2018թ.
Հունվար	80 534	70 010	104.2	86.9
Հունվար-փետրվար	80 649	69 743	103.6	86.5
Հունվար-մարտ	80 709	69 421	102.7	86.0
Հունվար-ապրիլ	80 585	69 224	101.7	85.9
Հունվար-մայիս	80 257	69 122	101.1	86.1
Հունվար-հունիս	79 782	69 012	100.6	86.5

Խորհրդատվություն ստացած աշխատանք փնտրողները, 2018թ.

	Տարեկազմից, մարդ	Հունիսի վերջի դրությամբ	
		մարդ	ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	63 564	12 010	100
<i>այդ թվում՝ ստացել են խորհրդատվություն հետևյալ հարցերով.</i>			0
աշխատանքի և զբաղվածության օրենսդրության	15 793	3 147	26.2
մասնագիտական կողմնորոշման	9 448	1 718	14.3
զբաղվածության ծրագրերի	20 343	4 334	36.1
աշխատանքի փոփոխման	3 106	528	4.4
այլ հարցերով	14 874	2 283	19.0


Աշխատուժի պահանջարկը¹ և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը, 2018թ.

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատուժի պահանջարկը		Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը ²	
	մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %	մարդ	2017թ. նույն ամսվա նկատմամբ, %
Հունվար	1 678	119.0	51	75.0
Փետրվար	1 642	106.0	51	82.3
Մարտ	1 752	98.6	48	88.9
Ապրիլ	1 806	98.1	46	88.5
Մայիս	1 999	97.3	41	91.1
Հունիս	2 602	111.6	32	82.1

Աշխատուժի պահանջարկը և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը, հունիս

%-ով նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



Աշխատուժի պահանջարկն ըստ ամիսների

ամսվա ընթացքում

	Ընդամենը, մարդ		այդ թվում				Ընդամենը աշխատուժի պահանջարկի նկատմամբ, %, 2018թ.		
	2017թ.	2018թ.	կրկնվող աշխատատեղեր ³		չկրկնվող աշխատատեղեր		Ընդամենը	կրկնվող աշխատատեղեր	չկրկնվող աշխատատեղեր
			2017թ.	2018թ.	2017թ.	2018թ.			
Հունվար	1 831	2 319	1 177	1 803	654	516	100	77.7	22.3
Փետրվար	2 106	2 239	1 432	1 659	674	580	100	74.1	25.9
Մարտ	2 457	2 367	1 581	1 585	876	782	100	77.0	33.0
Ապրիլ	2 515	2 511	1 768	1 811	743	700	100	72.1	27.9
Մայիս	2 054	2 753	1 276	1 934	778	819	100	70.3	29.7
Հունիս	3 098	3 402	1 983	2 012	1 115	1 390	100	59.1	40.9

¹ Այստեղ և հետագայում՝ վերաբերում է միայն ՀՀ զբաղվածության պետական գործակալության հետ համագործակցող գործատուների ներկայացրած պահանջարկին:

² Աշխատանք փնտրողների թվաքանակն է մեկ թափուր աշխատատեղի հաշվով:


³ Կրկնվող համարվում է թափուր այն աշխատատեղը (զբաղմունքը) որի վերաբերյալ գործատուն հայտ է ներկայացրել հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ժամանակահատվածում և չի համարվել (թափուր է):

Աշխատուժի պահանջարկն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2018թ. հունիս

ամսվա ընթացքում


ՏԳՏԴ (խմբ. 2)		Չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը				Նոր ստեղծված աշխատա- տեղեր
		Ընդամենը, մարդ	ընդամենի նկատ- մամբ, %	բանվորա- կան մասնագի- տությամբ	ընդամենի նկատ- մամբ, %	
A-U	Ընդամենը, այդ թվում՝	1 390	100	867	100	27
A	Գյուղատնտեսություն	158	11.4	133	15.3	5
B-E	Արդյունաբերություն	511	36.8	429	49.5	0
F	Շինարարություն	22	1.6	17	2.0	0
G	Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	204	14.7	106	12.2	5
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	9	0.6	1	0.1	0
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	116	8.3	71	8.2	6
J	Տեղեկատվություն և կապ	22	1.6	3	0.3	0
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	28	2.0	9	1.0	5
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	4	0.3	1	0.1	0
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	11	0.8	1	0.1	0
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	1	0.1	1	0.1	0
O	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոց. ապահովություն	18	1.3	5	0.6	0
P	Կրթություն	42	3.0	4	0.5	0
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	58	4.2	14	1.6	0
R	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	37	2.7	18	2.1	0
S	Սպասարկման այլ ծառայություններ	149	10.7	54	6.2	6
T	Տնային տնտեսությունների վարման ծառայություններ	0	0	0	0.0	0
U	Օտարերկրյա (էքստերիտորիալ) կազմակերպությունների գործունեություն	0	0	0	0.0	0

Աշխատուժի պահանջարկն ըստ տնտեսության հատվածների




հունիս

Աշխատուժի պահանջարկն ըստ մասնագիտական կազմի



Աշխատուժի առաջարկը, պահանջարկը և աշխատանքով ապահովվածները, հունիս



Աշխատուժի պահանջարկը ըստ զբաղմունքի¹, 2018թ., հունիս

ամսվա վերջի դրությամբ

Կոդ	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը, մարդ
1-9	Ընդամենը	2 602
1	Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների, քաղաքական և հասարակական միավորումների	14
121	Ղեկավարներ՝ կազմակերպությունների և հիմնարկների	1
122	Ղեկավարներ՝ մասնագիտացված ստորաբաժանումների	5
131	Ղեկավարներ՝ փոքր կազմակերպությունների	8
2	Մասնագետներ՝ բարձր որակավորման	296
211	Ֆիզիկոսներ, քիմիկոսներ և մասնագետներ՝ հարակից	6
212	Մաթեմատիկոսներ, վիճակագիրներ և մասնագետներ՝ հարակից	3
213	Մասնագետներ՝ համակարգիչների	15
214	Ճարտարապետներ, ճարտարագետներ և մասնագետներ՝ հարակից	29
221	Մասնագետներ՝ կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների բնագավառների	4
222	Մասնագետներ՝ առողջապահության բնագավառի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության)	145
223	Մասնագետներ՝ բժշկական խնամքի և մանկաբարձության	16
231	Դասավանդողներ՝ համալսարանների, քոլեջների, արհեստագործական դպրոցների և այլ կրթական հաստատությունների	4
232	Դասավանդողներ՝ միջնակարգ դպրոցի	36
233	Դասավանդողներ՝ նախնական դպրոցի և նախադպրոցական կրթության	8
234	Դասավանդողներ՝ հատուկ կրթության բնագավառի	5
235	Մասնագետներ՝ այլ կրթության բնագավառի	4
241	Մասնագետներ՝ ձեռնարկատիրական գործունեության և կադրերի	4
242	Մասնագետներ՝ իրավունքի բնագավառի	4
243	Մասնագետներ՝ տեղեկատվության և հարակից մասնագիտությունների բնագավառների	2
244	Մասնագետներ՝ հասարակական և հարակից գիտությունների բնագավառների	4
245	Գործիչներ՝ գրականության և արվեստի	7
3	Մասնագետներ՝ միջին որակավորման	259
311	Տեխնիկներ՝ ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների	14
312	Աշխատողներ՝ օժանդակ, համակարգչային սարքավորումների սպասարկման	5
313	Տեխնիկներ և օպերատորներ՝ օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների	17
314	Հսկիչներ և տեխնիկ-մասնագետներ՝ նավերի և օդանավերի	25
315	Տեսուչներ՝ շինարարության և անվտանգության (հրշեջ, տրանսպորտային միջոցների, արտադրական գործընթացների, արտադրանքի և արտադրության)	7
322	Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ միջին բժշկական անձնակազմի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության)	16
323	Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ բժշկական խնամքի և մանկաբարձության	22
331	Դասավանդողներ՝ տարրական կրթության	3
332	Դասավանդողներ՝ նախադպրոցական դաստիարակության և կրթության	10
333	Դասավանդողներ՝ հատուկ կրթության	1
341	Աշխատողներ՝ ֆինանսների և առևտրի բնագավառների	51
342	Գործակալներ՝ առևտրական-առևտրային ծառայությունների	59
343	Աշխատողներ՝ վարչակառավարչական	7
346	Աշխատողներ՝ սոցիալական ոլորտի	17
347	Աշխատողներ՝ արվեստի, զվարճությունների և մարզական բնագավառների	5

¹ Դասակարգման հիմքը՝ Զբաղմունքների տեսակների ՀՀ դասակարգիչ:

Կոդ	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը, մարդ
4	Ծառայողներ՝ գրասենյակների	145
411	Օպերատորներ՝ ստեղնային մեքենաների, և քարտուղարներ	21
412	Ծառայողներ՝ թվային տեղեկատվություն մշակող	7
413	Ծառայողներ՝ զբաղված նյութեր և տրանսպորտ հաշվառելով	7
414	Աշխատողներ՝ գրադարանների, փոստային և այլ ծառայությունների	5
421	Գանձապահներ և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	65
422	Ծառայողներ՝ զբաղված հաճախորդների իրազեկմամբ	40
5	Աշխատողներ՝ սպասարկման ոլորտի, մնակարանային կոմունալ տնտեսությունների և առևտրի կազմակերպությունների	387
511	Սպասարկողներ՝ ճամփորդությունների ընթացքում և հասարակական տրանսպորտում, աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	19
512	Սպասարկողներ՝ տնային տնտեսության վարման ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հանրային սննդի կազմակերպությունների	92
513	Աշխատողներ՝ անհատական ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	37
514	Աշխատողներ՝ այլ, անհատական ծառայություններ մատուցող	68
516	Աշխատողներ՝ քաղաքացիների և սեփականության պաշտպանության ծառայությունների	13
522	Վաճառողներ՝ խանութների, և ցուցադրողներ՝ ապրանքների	133
523	Վաճառողներ՝ տաղավարների և շուկաների	9
532	Աշխատողներ՝ ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների	7
533	Աշխատողներ՝ կանաչապատման կազմակերպությունների	6
534	Աշխատողներ՝ էներգամատակարարման կազմակերպությունների	3
6	Աշխատողներ՝ որակավորված՝ գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների	76
611	Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, լանջարանոցային, պտղատու և դաշտային մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների	2
612	Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անասնապահական ապրանքներ արտադրող կազմակերպությունների	21
613	Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, գյուղատնտեսական մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների և անասնաբույժներ	50
614	Աշխատողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անտառային և փայտամթերման կազմակերպությունների և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	1
621	Աշխատողներ՝ անձնական սպառման համար, գյուղատնտեսական, անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնորսական ապրանքներ արտադրող	2
7	Բանվորներ՝ որակավորված՝ արդյունաբերական կազմակերպությունների, գեղարվեստական արհեստների, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության և ընդերքի հետազոտման	454
712	Շինարար – տեղակայողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	4
713	Բանվոր–հարդարողներ՝ շինարարական և շինվերանորոգման աշխատանքների, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	24
714	Ներկարարներ, բանվորներ՝ շենքերի և շինությունների մակերևույթների մաքրման ու հարդարման, մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	3
721	Կադրավարողներ, եռակցողներ, դարբիններ, գրտնակողներ, նախապատրաստողներ՝ կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղի, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	7
722	Գործիքագործ - փականագործներ, հաստոցավարներ, կարգաբերողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների	21
723	Մեքենագետներ՝ սարքավորումների, փականագործ-հավաքողներ և փականագործ-նորոգողներ	10
724	Փականագործ-հավաքողներ՝ էլեկտրական, էլեկտրամեխանիկական և ռադիոէլեկտրոնային սարքերի	12
726	Բանվորներ՝ օպտիկամեխանիկական արտադրության և հատուկ արտադրությունների	13
728	Բանվորներ՝ մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության այլ արտադրությունների	3
731	Բանվորներ՝ մետաղի և համանման այլ նյութերի վրա ճշգրիտ աշխատանքների	2

Կոդ	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը, մարդ
732	Բրուտներ, մավրոններ, կաղապարողներ՝ ապակուց, խեցուց, ճենապակուց և այլ նյութերից պատրաստված արտադրատեսակների, բանվորներ՝ հարակից մասնագիտությունների	1
733	Բանվորներ՝ գեղարվեստական արհեստների և գեղարվեստական արդյունաբերության այլ տեսակների արտադրությունների, բանվորներ՝ մետաղից, փայտից, մանածագործվածքից և այլ նյութերից արտադրատեսակների պատրաստման և վերականգնման	3
734	Բանվորներ՝ գրահրատարակչական արտադրության	10
741	Բանվորներ՝ սննդի արդյունաբերության	151
742	Բանվորներ՝ փայտամշակման արդյունաբերության	18
743	Բանվորներ՝ մանածագործական արդյունաբերության	149
744	Մոդրեզորներ, կաշեգործներ և կոշկակարներ	11
745	Բանվորներ՝ շինարարական նյութերի արդյունաբերության	5
751	Բանվորներ՝ տրանսպորտի բնագավառի	5
752	Բանվորներ՝ կապի բնագավառի	2
8	Օպերատորներ, ապարատավարներ, մեքենաներ, փականագործ-հավաքողներ՝ մեքենաների և կայանքների	187
812	Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և այլ մասնագետներ՝ մետաղահալ կայանքների	5
813	Օպերատորներ՝ ապակու և ապակե, ճենապակե և կերամիկական իրերի, երեսպատման ու կապակցող նյութերի արտադրության ու թրծման կայանքների և վառարանների	1
814	Օպերատորներ և ապարատավարներ՝ փայտանյութի մշակման և վերամշակման, թաղանթանյութի, թղթի, ստվարաթղթի, ֆիբրի և դրանցից պատրաստված իրերի արտադրության կայանքների	2
815	Ապարատավարներ, օպերատորներ և մեքենավարներ՝ քիմիական և նավթաքիմիական հումքի վերամշակման կայանքների	2
816	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ էլեկտրակայանների և ցանցերի կայանքների	11
817	Օպերատորներ՝ ավտոմատ հավաքման գծերի և արդյունաբերական ռոբոտների	4
821	Օպերատորներ, մեքենավարներ՝ մետաղի և հանքային հումքի վերամշակման մեքենաների և սարքավորումների	2
823	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ ռետինի, պլաստմասսայի, սինթետիկ իեժի, կաուչուկի և համանման այլ իրերի արտադրության սարքավորումների	3
824	Օպերատորներ՝ փայտամշակման սարքավորումների	8
825	Օպերատորներ և մեքենավարներ՝ տպագրական և կազմարարական մեքենաների	2
826	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ մանածագործվածքի (տեքստիլի), կաշվի, մորթու վերամշակման և դրանցից իրերի արտադրության սարքավորումների	60
827	Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ սննդամթերքի և համանման այլ մթերքների մշակման սարքավորումների	3
828	Փականագործ-հավաքողներ	11
829	Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և փականագործ-հավաքողներ՝ անշարժ սարքավորումների, այլ խմբեր չներառված	8
832	Վարորդներ՝ ավտոմոտորանսպորտի	61
833	Օպերատորներ և մեքենավարներ՝ գյուղատնտեսական, հողափոր, ամբարձիչ, բեռնման-բեռնաթափման այլ շարժական սարքավորումների	4
9	Բանվորներ՝ որակավորում չունեցող	784
911	Վաճառողներ՝ փողոցում, և համանման այլ աշխատողներ	11
912	Մաքրողներ՝ կոշիկի, և աշխատողներ՝ փողոցում տարբեր ծառայություններ մատուցող	4
913	Սպասավորներ՝ տնային, հավաքարարներ՝ բնակարանների և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների	122
914	Աշխատողներ՝ շենքերի սպասարկման, պատուհանների լվացման և համանման այլ աշխատանքների	29
915	Ցրիչներ, բեռնակիրներ, դռնապաններ և աշխատողներ՝ հարակից այլ զբաղմունքների	40
916	Հավաքողներ՝ աղբի, և համանման այլ աշխատողներ	56

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Կոդ	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը, մարդ
917	Աշխատողներ՝ պատվեր ընդունող, սպասարկման ոլորտի կազմակերպություններում	27
921	Բանվորներ՝ գյուղատնտեսության, ձկնաբուծության, ձկնորսության և հարակից այլ ոլորտների	73
931	Բանվորներ՝ լեռնարդյունահանման արդյունաբերության, շինարարության, երկրաբանության և ընդերքի հետախուզման	2
932	Բանվորներ՝ մշակման արդյունաբերության	385
933	Բանվորներ՝ տրանսպորտի և կապի ոլորտի և բեռնակիրներ	35

Աշխատանքի տեղավորվածներն ըստ սեռի, 2018թ.

ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը, մարդ			2017թ. նույն ամսվա նկատմամբ, %			Աշխատանք փնտրողների նկատմամբ, %		
	Ընդամենը	Կին	Տղամարդ	Ընդամենը	Կին	Տղամարդ	Ընդամենը	Կին	Տղամարդ
Հունվար	651	430	221	134.5	146.8	115.7	0.8	0.8	0.8
Փետրվար	902	580	322	133.6	141.5	121.5	1.1	1.0	1.1
Մարտ	874	543	331	114.0	111.5	118.2	1.0	1.0	1.1
Ապրիլ	929	605	324	114.4	117.9	108.4	0.9	0.8	0.9
Մայիս	929	605	324	145.8	171.9	113.7	1.1	1.1	1.1
Հունիս	972	691	281	128.6	148.9	96.2	1.2	1.3	1.0